ՍՈՒՐԻԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 193—43 ԿԻՐԱԿԻ 15 ՅՈՒՆԻՍ 1947, ՀԱՅԿ ՋԵՌԲԷ ՀԱՏԸ 15 Ռ.

1915 ՅՈՒՆԻՍ 15

ԹԻՒ ՁԱՐԳԱՆՔ

ՍՈՎԵՏ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՎԿԱՅ ՍՈՑ. ԴԵՄՈՔՐԱՏ ՀԵՂԱԿԵԱՆ ՔԱՆ ԱՆՄԱՀՆԵՐՈՒՆ

ՈՃԻՐԸ

Կեսարիոյ մէջ կախաղան բարձրացուած հօր՝ Վ.Ա-ՀԱՆ ԱՄԱՏՈՒՆԻի անմահ յիշատակին

Բազմազվեռան դու հրէ՛ն,
Ոյզ մարդկութեան ահկարեկիր
պատուհաս
Սեւ գիշեր մ'ես ծնաներ
Այն սեւ գիշերն անաւոր
Մայրդ ծանրաբեղուն
Կատաղայոյզ պրպակեց
Ճակատդ սեւ
Կարմիր արեամբ ժռռալիր
Որ արգանիմն արտ.
Մրրիկի պեսկայծակներուխարանող
Ազգին անկախ հանդարեղ
Եւ կամ սառուկ. կոտորի՛դ տակ
Սպառնացայլ մահացումի
Վիհը գահավիժեզ...
Գեղաձիծաղ Վռոխորհն
Մինչ պատմական Կապադովկիա
Ու Պոնտոսի բարձրավանդակեն
Հեռագուարն Կիլիկիա...
Դիակներու բուրգերով
«Բաղտակերքուրիւն» ես կանգներ
Անուն յաւի՞տ կոխոտեր
Ներքանիդ տակ արիւնոյ
Ակեմին է սոսկ բիւեռուած
Խանդակոռով մայրերու
Նարմինագան կոյսերու
Դիւցազնական իմ ցեղիս
Ուռն ընտրանիներն հոծեցիր
Տապարիդ տակ անխրնայ
Բանտերուդ մէջ մահասուտեր
ԿԱՅԱՂԱՆԻՆ սեմին վրայ
Անոնց ջահեր ազատութեան
Ցաւերժորեն կր փոդփոդին
Գանքհոնի խորն յաւեն
Նորաժպիտ արեւոյսով օծանուած.
Անոնց՝
Ասուաւծացած վեհութեան
Փառին անվրկանդ,
կր դրոշմն դպիտիազարդ
Գաղափարին հրա՛յրեն անմահ՝
Ձերդ ատուուան բոցանուտ,
Քու արբապիզ հեսքերո՛ւդ վրայ
Ո՛վ չար ոգի թուրանեան.
Խորհուրդդ՝ արիւնն է,
Խորհրդանիշդ՝ տապար,
Հերոսական պայքարէ
Դու խոյս կուտաս վասաբար
Եւ անպատիժ դեռ կ'երագի՞ս յաղ-
թանա՞կդ,
Կարմիր արեամբ յղփացած
Հայկազունի քաջերուն՝
Ոռոց հոնդիններն երկուանի
Դեռ կը հնչեն արտիս խորհն վրբ-
տացանց՝
Դեպի արիերն տղմափրփո՛ւր եփ-
ռատին...
Ուր, ձայնը ցեղիս՝
Մարկանս ձա՛յնն է հիմա...
Շեռ աւանեներ վերածեցիր աւերակ
Ցոնմական բոյնս է ապատան
Ազատաւերուդ գիշատիչ
Որ կը սգայ ամայութեան մէջ
մրրիկ...
Փոխան տունի մը կանգնելու,
Վարդենիի դիւրական,
Իմ ցանկալի հայրենիքիս կուրծքի՛ն
վրայ՝
Արիւն, տատ՚սկ սերմանեցիր

ՍՈՑԵԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀԵՂԱԿԵԱՆ ԱՆՀԵՆՃԵԼԻ ԳՈՐԾԻՉ
ԱՆՄԱՀՆ ՓԱՌԱՍԱՊ

Քսան Կախաղանցներեն
ԹՈՎՄԱՍ ԹՈՎՄԱՍԵԱՆ

Քսան Կախաղանցներեն
ՅԱԿՈԲ ՊԱՍՄԱՃԵԱՆ

Ոռուն հոխուրեամբ ես սրնանած
Վայրագօրեն ու վասաբար՝
Դարերու հեռ մնծաղղարդ,
Հայ սերունդի ճախաճի՛նեն է հեզ
բաժին.
Որ կը հեղու միայն սերմեր վրի-
ժարբոբ
Նեմեսիսեան յաղթանակո՞վ բոցա-
վառ
Մրագնելու չա՛նն արիւնազանց
Բազինեներուդ մանաբայ՝
Ուր տուայտող ճանաչակներուն հո-
գիներն անմահ՝
Քեզ ամօթի եւ պատուիրան
աւարակի՞ն են գամեր
Այսօր հենտող եւ արեւափառ Հա-
յասանի
Ցաւերժանի՞սն կոթողին վրայ:

Հալեպ Բ. Վ. ԱՄԱՏՈՒՆԻ

"Բրավտա,, կը մերկացնէ Թուրքիոյ

ԻՍԿԱԿԱՆ ԴԻՄԱԳԻԾԸ

ՄՈՍԿՈՒԱ.— «Բրավտայի քաղաքական մեկնաբանը Թուրքիոյ արուած ամերիկեան օգնութեան մասին մեկնաբանելով, կը յայտարարէ թէ Ամերիկա ոչ միայն կ'ուզէ օգնութիւն տալ Թուրքիոյ, այլ նաեւ ամբողջապէս իր հակակշռին տակ կ'առնէ Թուրք տնտեսութիւնն ու քաղաքականութիւնը։ Ինչ ոգի համար անծանօթ է այլեւս, կը գրէ ան, որ ամերիկացի զինուորական մասնագէտներ կը գտնուին Թուրքիոյ մէջ, որոնք ձեռք առած են Թուրք բանակին ու ռազմական բոլոր կէտերուն և ծրագիրներուն հակակշիռը։ Ասիկա ուղղակի թափանցում մը է Թուրքիոյ տնտեսական ու քաղաքական կեանքին ներս, որուն դէմ Թուրք կառավարութիւնը ոչ մէկ ընդվզում կ'ունենայ։ Թուրքիա միանգամ ընդմիշտ կորնցուցած իր քաղաքական, տնտեսական և զինուորական ազատութիւնը ժողովուրդը կ'անդրադառնա՞յ արդեօք այս իրողութեան յառաջացնելիք սըխրալի արդիւնքներուն...»։

Ինչպէս Հնչ. Կուսակցութիւնը վերակազմեցաւ զորավարական

[illegible]

Գերման իմպերիալիզմը հին ժամանակներէ ի վեր համիտեան Թուրքիոյ ընդարձակաձգուլ երկիրներուն վրայ աչք ունեցած, կը գաղնակցի, կը շաղակրատ նոր Թուրքիոյ վարիչներու հետ ու իր այս ծրագիրը կարենալ զործադրելու համար պէտք կը տեսնէ Թուրքիոյ մէջ գտնուած չէնարար ու ստեղծագործող ազգը մէջտեղէն վերցնել ու ասոր համար մեծ պատերազմի վաղորդայնին իր լիազօր գիւանագէտներու միջոցաւ խորհուրդ կու տայ թէ «Հայկական նարցը մի անգամ ընդ միշտ կարենալ վերջացնելու համար պէտք է հայերը Միջագետք փոխադրել»։ Գերման գիւանագէտի այս թելադրութիւնը մեծ զոհունակութեամբ կ'ընդունի Թուրք կառավարութեան կողմէ ու ամբողջ թերթերու նիւթ կը դառնայ։ Օրին Պոլսոյ հայ օրաթերթերէն «Մանզումէի Էֆքարը» արտատպեց իր թերթին մէջ։ Այս յայտարարութիւնը չատերու կողմէ անկասկած անցաւ, բայց հայ ժողովուրդի մէջ ծնունդ առնող Հնչ. Կուսակցութիւնը հասկցաւ այս չար կարմ, լակոնական ոճով հրապարակ դրուած յայտնութեան իմաստը և անոր ունենալիք անդրադարձումները։ Հնչ. Կուսակցութիւնը իր յեղափոխական կռուին լրիւ գիտակցութեամբ մէջ մտնակ ցցուեցաւ և ընդդիմացաւ Իտրհատան և անոր դաղափարներու կոյր հետեւող հայ կուսակցութեան դէմ։

1908 թիւին Տաճկաստանի մէջ հռչակուած՝ ըստ վերքրան ընկեր Սապահլեանի բանին՝ պոչը կարած սահմանադրութիւնը պարզ թմբեցուցիչ դեղ մը էր, որ հայ դասի պաշտպան կանգնող անձեր, կառավարութիւններ ատեն մը եւս քնանան և իրենց ազդեցութիւնը կատեցնեն։

Ինչպէս ըսինք չատերը հաւատացին այս կեղծ ու պատիր պոչը կարած սահմանադրութեան և զորավիգ կանգնեցան Թուրք կառավարութեան դեմ ստանձնող Իտրհատ Թէրքազգը կուսակցութեան։

Ս. Դ. Հնչ. Կուսակցութիւնը՝ որ Օսմ. Սահմանադրութեան հռչակումէն վերջ թէեւ թերահաւատ, բայց անկեղծութիւն ունեցած էր լեկալ հողի վրայ փոխարինել յեղափոխական զործը, ուղղակի ռազմական կարգեր յառաջացնելու համար։ Եղբայրական դաշինքներ հաստատել Թուրքիոյ բոլորենչուած բարկացուցիչ տարրերուն հետ առանց ցեղի ու կրօնի խտրութեան, և այդ ուղղութեամբ ու հոգեբանութեամբ հրապարակ իջած էր և կը գործէր, սակայն չուշացաւ և իր կասկածները իրականացաւ։

Շարունակելի ԿԻՒԼԻՍԷՐ ՏԷՄԻՐՃԵԱՆ

20 ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ

Եթէ Պատուիրեան հետագայ չրջաններում՝ հարկ է տեսնուում նախընթաց ժամանակներում կատարուած իրողութիւնները պատմել, վերլուծել, վերաձևաւորեան ենթարկել. — մեծագոյն է՝ կատարուած անցքը, դէպքը դնել իր սեփական անցեալի չրջանի մէջ և արացոլացնել, պատկերացնել բոլոր ազդակները, կուսէ բռնուող բոլոր ոյժերն ու նրանց միջու

՝ Այնուհետև է, որ վերաձևաւորեան ենթարկել ինքնին կը կերպարանուրուի և եզրակացութիւնը կը ստուերագծուի որոշ գոյներով։

Բան կախաղանները առանձնացած մաս, կղզեցած դէպք չէ, այլ ընդհանուր չղթայի մի օղակը, պատմական իրողութիւնների զարգացման պրոցեսի մի որոշեալ ժամանակաշրջանը, բուսկ։

Եւ այդ լաւ հասկանալու, վերաձևաւորելու համար՝ առնենք այսօրուան կեանքը և ատրճանաբար վայր իջնենք, մինչև մեզ հետաքրքրող ատրճանը, պրոցեսի առաջին չրջանը։

Այսօրուայ «Նոր Թիւրքիայի» մէջ չկան, այլեւս, «Հին Բացարձակապետութիւնը» մարմնացնող դարաւոր հաստատութիւնները — «Սուլթանաթութիւնը» փշրուել, չքացել, անյայտացել է։ Չկայ և կրօնական «Բացարձակապետութիւնը», — «Խալիֆայութիւնը». սա էլ թատերաբեմից վայր է իջել։

Ուրեմն, անպատասխանատու ազդակները գործելուց դադարել են։

Ու դրանց փոխարէն կայ «Հանրապետութիւն», — ասել է ժողովրդական պատասխանատուութեան վրայ հաստատուած քաղաքական մի կարգաւորութիւն։ Թող լինի նա «Բուրժուազական» կամ «Դեմոկրատական», վերջապէս՝ «Բացարձակապետական» չէ, — այլ ներկայացուցչական, այսինքն՝ պատասխանատուութեան հիմունքով մի կազմաւորութիւն։ Նա է Թրքական վերջին տարիների կեանքի վերջին օղակը։ Իրողութիւնների զարգացման, ատրճանաւորումի գագաթնակէտն է նա։

Ո՞վ է այդ «Հանրապետութեան» ոգին, վարիչ ոյժը, նրա տեսական ու գործնական գաղափարախօսը, արտայայտիչ ազդակը, — «Խալք» («Ժողովուրդ») կուսակցութիւնը։

«Խալք»ը ամէն ինչ է։

«Նոր Թուրքիա»ն էլ չի ուզում տարաւոր տարրեր, տարասեռ ազդակներ տեսնել Թուրքիայի մէջ, այլ միայն մէկ ազգ, մէկ տարր՝ համասեռութիւն։ «Նոր Թուրքիա»ն խեղդամահ, ջրամոյն է անում բոլոր նրանց, որոնք զեկավարիչ դասակարգի դէմ են ծառանում։ «Նոր Թուրքիա»ն չի ճանաչում Աչխատանքի իրաւունք։ Նա ժողովրդների վրայ նայում է որպէս ոչխարի հօտերի, որոնց կարելի է փոխանակել։ Նա արգիլում, թոյլ չի տալիս որ աշխատաւոր Հայը ոաք կոխի, թէև նուաճուած, բայց իր հայրենի, իր սեփական երկրի սահմանների մէջ։ Նա ինքը՝ «Թրքական պատմական եաթաղանն» է։

Եւ սա ԱՅՍՕՐ է։ Իշխանք սանդուխից մի ատրճան վայր՝ հասնենք ԵՐԵԿԻՆ։

Երէկ Իտտիհատն էր։ Նա արտայայտում, ներկայացնում էր «Սահմանադրական Թուրքիան»։ Ե՞րբ Ջարդը, կոտրածը դադարեց «Սահմանադրական Թուրքիայի» մէջ։ Երբեմն փոքր ատրճանով, երբեմն մեծ, բայց ՀԱՅԱՍԱՆՈՒԹԻՒՆը շարունակում էր, որպէս իրերի բնական մի դրութիւն։ «Թուրքիայի մէջ ժայռեր կան. հարկաւոր էր այդ բոլոր ժայռերը փշրել, խորտակել և նրանից միապաղաղ մի զանգուած կազմել»։ Սա էր եղել «Երիտասարդ Թուրքերի» պատմական ձգտումը, սկզբից մինչև վերջ։ սկիզբը առնելով, նոյնիսկ «ազատամիտ» Բէյլիտ փաշայից։ Պատմական այդ միտումը նրանք չէին էլ ծածկում, կուսակցների վրայից էին խօսում. իրենց թերթերի մէջ փռում։ «Մեր աշխատաւոր դասակարգը ծոյլ է. նրան շարժելու համար՝ հարկաւոր է հարկերով ծանրաբեռնել, դրաստը մարդու դեր չէ կարող կատարել. գրաստի տեղը ախոռն է և ո՛չ թէ պետական հաստատութիւնները։ Գիւղացին՝ գիւղացի, գործաւորը՝ գործաւոր, ծառան՝ ծառայ, և տիրոջը՝ տիրոջ»։ Սա էլ Իտտիհատի ընկերային տեսութիւնն էր։

Առաջին և երկրորդ ատրճանի մէջ կա՞ր տարբերութիւն, — և ո՛չ մի։ Երէկ և այսօր իրարու կցուած՝ մի չղթայաւորումն են կազմում։

Իսկ միւս օ՞րը։— Դա Սուլթան Համիտն է, պատմական Վանդալի որդան՝ դա Կարմիր Սուլթանն է. նա տարբերութիւնը համասեռութեան վերածելը կազմակերպց՝ որոշում և համապատասխան քաղաքական, տնտեսական հաստատութիւններ ստեղծելով ու գործի մղելով։

Հասարակական կեանքի մէջ միայն պիտի չբաւականանալ թէ դու ինչ ես մտածում, այլ պէտք է թափանցել, հասկնալ թէ՝ հակառակորդդ, թշնամիդ, դիմացդ կեցողը ինչ է մտածում։ — մահ։ — ապա երկու ճանապարհ կայ՝ կամ ՈՐԴ, ԲԱՑԵԼ կամ՝ ՏՂԱՄԱՐԴ, ԿՈՒՐՈՒՂ։

Կուսէ էինք Սուլթան Համիտի դէմ. պիտի կըռուէինք Իտտիհատի էլ դէմ։

Եւ մենք մեզ հետևողական ցուցինք, մեր պատմութիւնը շարունակեցինք։

Այն՝ ինչ որ Իտտիհատը արաւ 1914ին, 1915ին, նա նոյնը պիտի անէր 1912ին։ Եթէ Պալքանեան պատերազմի չրջանին չկարողացաւ իր հայասպանութեան ծրագիրը գործադրել, դա պլաւորապէս այն պատճառով, որ պատերազմը շուտ վերջ գտաւ...

Ու 1914ի, 1915ի կուսէ չրջանին եթէ կարողացանք վերապրել ու բոլորովին չոչնչանալ.— դա Հայ Պատմութիւնը պարտական է Ս. Դ. Հ. Կուսակցութեան Բան Կախաղաններին ու նախավկայ ընկերներին։

Բան Կախաղանների, Ս. Դ. Հնչակեանների համատրած ձերբակալութիւնները ահազանգը հնչեցրին։

«Նախ պէտք է զարկել Ս. Դ. Հնչակեաններին».— սա էր եղած Իտտիհատի հրահանգ-կոչը իր չարքերին։

Եւ նա զարկում էր։

Փակուած չատ աչքեր բացուել սկսան։

Շնչին Գարահիսարի հերոսական կռիւները, Եդեսիայի դիւցազնավայել ընդդիմադրութիւնը, Սուէտիայի ապստամբութիւնը և յաղթութիւնը, Վասպուրականի անշնորհ քաղաքականութիւնների ոգին.— այդ բոլորը ուղղակի գծով գալիս էին Բան Կախաղաններից և մեր նախավկայ ընկերների անկումից։

Ինչ որ փրկեցինք, դա կռուի արդիւնքով եղաւ։

Եթէ չկռուէինք, չէինք ունենալ այն՝ ինչ որ ունենք այսօր։

Բայց մեր կռիւը դեռ վերջացած չէ։

Նա շարունակում է ուրիշ ձեւով, ուրիշ մեթոդով, այլ տակտիկայով. բայց նա շարունակում է, ու կը շարունակուի, մինչև որ Բան Կախաղանների և նախավկայ ընկերների փայփայած գաղափարները — ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐը — ամբողջապէս կեանքի բաժինը չդառնան։

1935 ՀՆՉԱԿ

Փարամազի վերջին ճառը դատարանին մէջ

*Քիչ առաջ փոխ-նախագահ Խուրշիտ Պէյ սրբատաքաց յայտարարութիւններ բրաւ հոս, և ես, որ կեանքիս մէջ լացած չեմ, (նոյնիսկ տասնեակ տարիներով ընտանիքէս հեռու ապրեր և երբ օր մը տունս դառնալով հարազատ գուկիս կողմէ չճանչցուելու յուզիչ տեսարանին հանդէպ անայլայլ եմ մնացեր) ի՞նչ մեղքս պահեմ, խորապէս յուզուեցայ Խուրշիտ Պէյի ճառին անկեղծութենէն... ու լացի, ե՛ս, Փարամազս։ Որովհետեւ Խուրշիտ Պէյ մասը մեր վերջին վրայ դրաւ՝ ըսելով թէ «Ինչե՞ր չէին կրնար ընել ձեզի պէս խանդավառ մարդիկ, եթէ հասարակաց երջանկութեան իսկալը ընդհանուր դրօշի մը տակ հետապնդուէր»։ Լայի, այո՛, որովհետեւ այդ քանի մը բառերուն մէջ ճշմարտութեան ճառագայթը փայլեցաւ։ Այդ միեւնոյն հարցումը մե՛նք պիտի ընէինք, աւելցնելով թէ՝ ինչե՞ր չըրինք մենք այս դժբաղդ երկրին երջանկութեան համար, ի՞նչ անսահման զոհողութիւններու չյօժարեցանք, ինչքա՜ն եռանդ ու արիւն չպատեցինք հայ և թուրք եղբայրակցութեան իրականացման համար, ինչպիսի՜ զրկանքներ յանձն չառինք փոխադարձ վստահութեամբ զիրար բարձրացնելու համար...։ Ու ի՞նչ տեսանք։ Ո՜չ միայն անտարբերութեամբ ավելութեան դատապարտեցիք դուք մեր անգին ջանքերը, այլ գիտակցաբար հետամուտ եղաք մեր բնաջնջումին, մոռնալով որ Հայութեան բնաջնջումը բուն իսկ Թուրքիոյ կործանման համազօր է։ Դուք քաչալիեցիք ոճիրն ու հարստահարութիւնը և լռեցնել չանեցիք բազմաթիւ մեր արտայայտութիւն։ Դուք մեր կենսական հիւթով ապրեցաք դարեր շարունակ, և երբեք չուզեցիք որ այդ հիւթին աղբիւրը իրաւունք ունենայ կանգուն մնալու և արտադրելու։ Դուք ձգնեցիք մեզ՝ երբ կամաւորի բայտ էինք ու ողբալի համբերատարութեամբ կը հանդուրժէինք ամէն բռնութեանցմէ։ Դուք ահաբեկիք մեզ, երբ օր մը ուզեցինք թերմալ գոյութեան մը տարրերը խնդրել մեր իշխանաւորներէն։ Դուք զայրացաք, երբ մենք Արեւելքի մէջ Արեւմուտքի քաղաքակրթութեան սերմերն ուզեցինք ցանել՝ մեր ու ձեր ապագան երաշխաւորելու մտօք։ Դուք մեզ չարդել սկսաք, երբ օրինմէկը վճռեցինք մեր արժանապատուութեան համապատասխան դիրքի վրայ բարձրանալ։ Դուք մեզ օրէնքի պաշտպանութենէն դուրս ձգեցիք, երբ Մխիթարեան պոյտ Սահմանադրութեան պատնէշ իրաւունքներէն օգտուելու ուզեցինք։ Թուրքիոյ բազմացուցիչ տարրերուն մէջ ամենէն աւելի անձնուէր ու չինող տարրը եղանք և ամենէն աւելի մեզի տուժել տուիք։ Եւ այսօր ալ բռնի եղանակով Անկախ Հայաստանի մը ամբոստանութեան ներքեւ ճգմել կ՚ուզէք մեզ։

Ա՛յ, պարոնե՛ր, դատեցէք մարդիկ իրենց գործերով, իրենց աւանդութիւններով, իրենց գաղափարական կալուածին մէջ։ Ես անկասողական չեմ այս երկրին հանդէպ, ընդհակառակը ինքն է որ կ՚անկասելի ինձմէ չկարենալով հաշտուիլ զիս ոգեւորող գաղափարներուս հետ։ Եւ հա՛ կը ներ մ՚իրենց, առանց պահանջելու որ ինքն ալ ինծի ներէ. թէեւ փիլիսոփայ մը իրաւամբ ըսած է թէ՝ ԼԱՒ Է ՏԱՍԸ ՅԱՆՑԱՒՈՐԻ ՆԵՐԵԼ, ՔԱՆ ԱՆՄԵՂՄԸ ԴՍԱԳՈՐՏԵԼ...»։

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Թերթիս վարչութիւնը կը խնդրէ իր ընթերցողներէն որ իրենց վճարումները առանց յապաղումի կատարեն թերթիս ցրուիչներուն։

Տպարան ԱՆԻ Սայիպէ Հալեպ

ՄԱՀՎՃԻՌ

Անա այն զեկոյցը, զոր 1915 Յունիսին, Պոլսոյ Պատերազմական Ատեանը հաղորդեց մամուլին, Քան Հնչակեան ընկերներու մասին, ասոնց կախաղան բարձրանալեն յետոյ։

Պատերազմական Ատեանին առջեւ է ներկայութեան տեղի ունեցած դատավարութեամբ հաստատուեցաւ թէ հետեւեալ անձերը անկախ եւ ինքնուրոյն Հայաստան մը կազմելու համար ոճրագործներ սարքած են եւ օտարները կայսերական կառավարութեան դէմ զրգռելու եղանակով, ձեռնարկած են կայսերական երկիրներուն մէկ մասը Օսմանեան կառավարութենէն անջատելու, եւ այս նպատակով օտար երկիրներու զանազան տեղերը գաղտնի ու յայտնի համաժողովներ գումարելով հանդերձ հրատարակութիւններ, զրգռութիւններ, եւ թղթակցութիւններ ըրած են։ Այդ անձերը հետեւեալներն են.

Հնչակեան Կուսակցութեան ազդեցիկ անդամներէն եւ Ռուսահպատակ Կովկասցի Փարամազ անունով ծանօթ՝ Մատթէոս Սարգիսեան եւ կամ Թէքիրտաղցի Համբարձում Գրիգոր։

Վառնացի Յակոբ Ղազարեան, որդի Մուրատեանի, ուրիշ անունով՝ Մուրատ Զաքարեան։

Կերասունցի մշակ Մինաս, որդի Թաքրէլ Բէշիշեանի ուրիշ անունով՝ Սասունցի Սարգ Խաչիկ կամ Մինաս։

Պիթլիսցի դերձակ Սմբատ, որդի Վարդան Գալբեանի, ուրիշ անունով՝ Անկուսի Պետրոս։

Զմրկածաղցի յանձնակատար Վահան Պոյաճեան, ուրիշ անունով՝ Ռուբէն, որդի Մինաս Կարապետեանի։

Խարբերդցի Տօքթ. Պետրոս, որդի Պէնէք Թորոսեանի։

Վաճառական Արմենակ, որդի Համբարձումի։

Կօշկակար Աբրահամ, որդի Ստեփան Մուրատեանի։

Կալուածական Մրջնոբգ, Արաբկիրցի Արամ, որդի Կարապետ Աչըզպաշեանի։

Բժշկական Վարժարանի Գ. Դասարանի ուսանողներէն Արամ, որդի Աբրահամ Եկաւեանի։

Սարաճխանէի մէջ վրան շինող գործաւոր՝ Շապին Գարակիսարցի Գարեգին, որդի Առաքել Պողոսեանի։

Քիլիսի Հնչակեան Մանանճլուի նախագահ, Սինկէրի Ընկերութեան հաւաքիչ Յակոբ, որդի Ղազար Պասմաճեանի։

Նոյն ճիւղին անդամներէն եւ Հայոց Վարժարանին ուսուցիչներէն Թովմաս, որդի Վահան Թովմասեանի։

Կօշկակար Երեմիա, որդի Կիպրիանոս Մանանեանի։

Խարբերդի Հնչակեան ճիւղին անդամներէն Մկրտիչ, Յովհաննէս Էպրէնէսեան։

Զինուորական Վարժարանին մէջ, սպայութեան թեկնածու, Վանեցի Գեղամ, որդի Կարապետ Վանիկեանի։

Պարտիզակի Հայոց Վարժարանի ուսուցիչներէն Երուանդ Թօփուզեան։

Գայսերիի Հնչակեան ճիւղին անդամներէն եւ Վարժարանի ուսուցիչներէն Յովհաննէս, որդի Ստեփան Եղիազարեանի։

Գուրը Գահուէճի Գառնիկ, որդի Գրիգոր Պոյաճեանի։

Կ. Պոլսոյ Պատերազմական Ատեանի քաղաքային պատժական օրէնքին 54րդ յօդուածին համաձայն վերագրեալ անձերը Մահուան դատապարտեց. Վեհ. Սուլթանը վաւերացուց վճիռը, որով եղած կայսերական իրաւունքի համաձայն՝ վերոգրեալ անձերը Յունիս 2ի առաւոտեան, ժամը 3,30ին (Ը. Ե.) ըստ սովորութեան բերուած կրօնական պաշտօնեայի կողմէ կրօնական արարողութիւնը կատարուելէ, կասկնին գրելէ ու բժշկական քննութեան ենթարկուելէ ետքը, պատերազմական պաշտօնատան զինուցի կառափնատեղին տարուելով, մահու պատիժին ենթարկուեցան։

Վերոգրեալ ոճիրին համար ի բացակայութեան դարձեալ մահուան դատապարտուած Քոմիթէին ընդհ. կեդրոնին նախագահ Սապահիլեանի եւ անդամներէն Վարազդատի մասին ալ ձեռնարկուած է օրէնքին պահանջմանց գործադրութեան։

20 ԱՆՄԱՀՆԵՐՈՒՆ

Ցիշատակին ձեր կը բերեմ ես այսօր,
Արցունքի տեղ՝ ըմբոստացման երգ մը զոռ. . .
Ծառկեփտունքի փոխան զրօշ մը կարմիր,
Մուրմ մնեզաղով պճնազարդուած ճակատն իր։
Ու երէկուայ հայրենիքէն ձեր ուռ,
Որը ու սուգի տեղ կը բերեմ, ծիծաղնե՛ր,
Ուր ընչազուրկ ծորտերն հիմա տէրեր են,
Ուր բանտերը կեանքը կ՚ապրի մարդկօրէն։
Գաղափարը որուն համար զոհուեցաք,
Մարմին առած ու արձակած է հատակ,
Սերմերը որ ցանեցինք ձեր արիւնով. . .
Ընծիւրած են նորարողջոյ ծիլերով։
Ու հիմա մենք, ո՜վ նահատակ անմահներ,
Ուխտի կու գանք շնիմներուն առջեւ ձեր,
Դուք որ ասա՛ղ, առաւօտ մը չուսուցաք,
Կախաղանի սիներուն վրայ խաչուեցաք. . .
Ու արեւը որ վրկայեց ձեր մահուան,
Աչքի մը պէս, թող ըլլայ մեր-ալ վրկան։
Ո՜վ Փարամազ, Պէննէ, Վանիկ ու Արամ,
Ձեր անունով կ՚երդնունք, երամ՝ առ երամ,
Թէ մենք անղուլ պիտի կռուինք մինչեւ գայ,
Սոցիալիզմին յաղթանակը ապագայ. . .

ԱՐԴԱՐՈՒՆԻ